

„ՄՈՒՐՃ“-Ը 1889 Թ.

Ներկայ համարով «Մուրճ» քաղաքական-հասարակական-գրական ամսագիրը բոլորում է իւր առաջին տարւայ գոյութեան շրջանը, առաջիկայ 1890 թւականին իւր երկրորդ տարւայ շրջանը մոտեցնու համար:

Ցարին լրանալով, պարտք ենք համարում հասարակութեան մի հաշիւ ներկայացնել, թէ ի՞նչ արաւ «Մուրճ»-ը իւր գոյութեան սկզբնական տարում, ի՞նչ սկզբունքներով նա ղեկավարւեց, ի՞նչ տեղ նա կարողացաւ բռնել մեր պարբերական հրատարակութիւնների մէջ, և թէ ի՞նչպէս է մտադիր նա գործելու գալ 1890 թւականին:

«Մուրճ»-ի հրատարակութիւնը սկսելուց առաջ, մենք դիմեցինք հայ ընթերցող հասարակութեան մի բաժանորդագրական հրաւերով, ամսագրի ծրագրի և աշխատակցելու խոստացած անձերի աշունների հետ ծանօթացնելու համար:

Նրանց, որոնք չը զլացան իրանց աշխատակցութիւնը նոր լոյս տեսնող ամսագրին,—մենք յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը: Աւելի ևս շնորհակալ ենք այն անձերից, որոնք իրանց աշխատակցութիւնը թէ պահպանեցին մինչև վերջ և թէ այն փութանցում են հետեւեալ 1890 թւականը:

Մեծամասնութիւնը, բարեբաղդաբար, վերջիններին է պատկանում: «Մուրճ»-ին աշխատակցելու խոստացած բազմաթիւ անձերից միմիայն մի քանիսը դրժեցին իրանց տւած խօսքը: Բայց այժմ, երբ տարին լրանում է, մենք գոհունակութեամբ հաստատում ենք, որ, որքան էլ բազմաթիւ էր խոստացած անձերի թիւը, իսկականութիւնը այդ թւից էլ գերազանցեց: Եւ արդարև, «Մուրճ»-ի աշխատակիցների թիւը ամսէ-ամիս աւելացաւ, ոչ թէ եղածների տեղը

բռնելու, այլ եղածների վերայ դրականապէս աւելանալու համար: Զ'անցաւ մի ամիս, որ «Մուրճ»-ի բովանդակութիւնը ճոխացրած չը լինէր երկու-երեք նոր աշխատակիցների գրւած քննարկով, չը նայած, որ ոչ ոք չի կարող մեզ յանդիմանել անխորութեան մէջ՝ աշխատակիցների և տպւած նիւթերի նկատմամբ:

Մենք չենք կարող այդ երեւութը չը բացատրել նրանով, որ «Մուրճ»-ը քանի զնաց, աւելի ու աւելի արծարծեց հաւատ դէպի ինքը՝ մանաւանդ երիտասարդ ոյժերի մէջ, որոնք և զլիսաւոր կոն-տինգենտը կազմեցին «Մուրճ»-ի աշխատակիցների:

Մեր հրաւերին՝ «Մուրճ»-ը պահպանելու համար՝ պատաս-խանեցին հարիւրաւոր անձեր: Դոքա են «Մուրճ»-ի առաջին տար-ւայ բաժանորդները: Դոցա թիւը աւելի նւազ էր, քան ինչ պէտք էր «Մուրճ»-ի համար. այո՛, այդ թիւը շատ աւելի նւազ էր: Բայց բաժանորդագրութեան գործում, որի մէջ հասարակութեան վերա-բերմունքն ենք տեսնում դէպի մի հրատարակութիւն, կար այս միւ-թարական կողմը, որ 1889 թւականի «Մուրճ»-ի բաժանորդների կիսից աւելի գրւեցին բաժանորդ ամսագիրը՝ լոյս տեսնելուց յետոյ և ոչ թէ դրանից առաջ: Դրա մէջ մենք տեսնում ենք ապացոյց, որ «Մուրճ»-ի բաժանորդները վերաբերել են դէպի այդ ամսագիրը կա-տարեալ զիտակցութեամբ, որ և միութարիչ է և ցանկալի:

Պարտք ենք համարում մեր շնորհակալութիւնը յայտնել այն հարիւրաւոր անձերին, որոնք արձադանք տւին մեր հրաւերին: «Մուրճ»-ի այդ անդրանիկ բաժանորդները ուզեցին ոչ միայն «Մուրճ»-ը ստանալ, այլ և «Մուրճ»-ի երեւան դալուն և պահպանելուն օգնել: Մեր հրատարակութեան բաժանորդները մեծ մասամբ պատկանում են համեմատապէս ամենաինտելիգենտ հայ դասակարգին: Նոցա անունները, որպէս և աշխատակիցներինը, կապւած են «Մուրճ»-ի սկզբնաւորութեան հետ:

Նիւթական միջոցների սղութիւնը մենք լրացրինք մեր եռան-դով: Համարելով ամեն գործի սկիզբը դժւարին, զոհաբերութիւն պահանջող, մենք բիւջետի հաւասարակշռութիւնը պահպանելու համար չ'աշխատեցինք: Ընդհակառակը, մենք չ'ընդդիմացանք միշտ աւելի ու աւելի աճող նիւթերի հոսանքին, չ'ուզելով ճնշել մեր սերնդի մտաւոր արտադրութիւնների արտայայտութիւնը և ճնշել.

«Մուրճ»-ի այն ծաւալը, որին նա բնականապէս ձգտում է: Դրա հետեւանքը այն էր, որ միանգամայն անհնարին եղաւ մեզ համար մեր բաժանորդներին ամեն ամիս տալ միմիայն մեր խոստացածի չափ. ոչ գրաւելու, այլ միմիայն ազնիւ զրգուճներին ստիպւած, մենք հրատարակեցինք «Մուրճ»-ը աւելի մեծ ծաւալով, միանգամայն անց-նելով սահմանաւ չափը:

Այդքանը բաւական ենք համարում «Մուրճ»-ի, այսպէս ասած, արտաքին կողմերի մասին: Դառնանք այժմ դէպի մեր ամսագրի ներքինը, նորա բովանդակութիւնը և ուղղութիւնը:

«Մուրճ»-ի երեւան գալը ամենքի յիշողութեան մէջն է. նա երեւան եկաւ, երբ հայ հասարակութիւնը ութ տարի շարունակ ամսագիր չէր ունեցել: Հրապարակի վերայ էին միմիայն օրաթերթեր, որոնք տարիներ շարունակ, դրեթէ անընդհատ կերպով, կերակրում էին հայ ընթերցողների ուղեղը բանակոխանքով, որոնց անձնական և եսական բնաւորութիւնը մինչ վերջին ծայր ձանձրացրել էր հայ ընթերցողների ընտրելադոյն մասին և փչացրել գրական ճաշակը հազարաւոր այլ ընթերցողների:

Դրող զասակարգը բաժանւած էր որոշ խմբերի, որոնց առանձնութիւնը և անհամերաշխութիւնը դատասպարտել էր նրանց մտաւոր ամուլութեան և նախանձով ու չարութիւնով լիքը բամբասանքների:

Բայց նոյն իսկ գրողները շատ սակաւացել էին: Հրապարակի վերայ էին մատով համրելու թւով գրողներ, որոնց մեծամասնութիւնը, կարելի է ասել, աւելի վարժող էին, քան անկախ մտածողներ: Խորշելով ասպարիզում եղած թերթերի բռնած ընթացքից, գրական գործիչ լինելու ընդունակ մարդկանց մեծագոյն մասը ուղղակի հեռացել էր ասպարիզից, իսկ նորերի համար մամուլը բաւականաչափ գրաւելութիւն չ'ունէր: Իսկ նոքա, որոնք իրանց կապը չէին կորել մամուլից,—արտադրում էին որքան կարելի է քիչ: Գրական ամուլութիւնը ակներեւ էր, զարհուրելի էր, սպառնալի էր:

Նրանց, որոնք մեր ասածները չափազանցութիւն կը համարեն, կարող ենք համոզել թւերով: Բայց յոյս ունինք, որ այդ խօսքերը թւերով ապացուցելու նեղութիւնը մեզ չի տրւիլ, որովհետեւ մենք

խօսում ենք մի անցեալի մասին, որը չափից դուրս մօտ է ամբողջ ընթերցող հասարակութեան յիշողութեան:

Հասարակութեան հետաքրքրութիւնը դէպի մամուլը, դէպի տպագրական խօսքը պահպանւում էր արհեստական կերպով բանականով, որի մէջ գաղափարը վերջին տեղն էր բռնում, իսկ հոգսը գրական պատշաճաւորութեան համար՝ ամենավերջին տեղը:

Այդ հանգամանքների մէջ էր, որ լոյս տեսաւ «Մուրճ»-ը և, ի հարկէ, վերջինս բռնեց բոլորովին այլ ընթացք, իւր համար հետաքրքրութիւնը նա քաղեց բոլորովին այլ աղբիւրներից. բայց որ նա, լուրջ լինելով հանդերձ, կարողացաւ հետաքրքրական լինել, — ոչ ոք կարող է «Մուրճ»-ի այդ յատկութիւնը հերքել և ուրանալ: Մեր աչքով տեսածը և մանաւանդ մասնաւոր տեղեկութիւնները գաւառներից՝ մեզ համոզել են, որ «Մուրճ» կարգացողները ոչ միայն բաժանորդներն են, այլ առհասարակ հայ ընթերցող դասը, և որ ամսագրի մի օրինակից օգտւողները երբեմն տասնեակներ են:

«Մուրճ»-ը կենդանի օրգան էր այն պատճառով, որ նա ամբողջապէս նւիրւած էր մեր կենսական խնդիրներին և ժամանակակից կեանքին: Իւր առաջնորդողներով, իւր վէպերով, իւր հատ-հատ յօդաւածներով, իւր ներքին Տեսութիւնով նա շօշափում էր, նկարագրում էր կամ քննադատում մեր ներքին կեանքի խնդիրները և կեանքի կազմն ու երևոյթները: Ոչինչ չը տպւեց «Մուրճ»-ում, ինչ չէր կարող յարաբերութիւն ունենալ մեր ժամանակակից կեանքի որ և է կարևոր խնդրի կամ կեանքի ու գրականութեան երևոյթի և կամ հասարակութեան պահանջի հետ: Յօդաւածներ, որոնք ինքն ըստ ինքեան կարող էին արժէք ունենալ, բայց որոնց երևալը չէր կարող արդարացնել հասարակութեան ներկայ պահանջով, ընդունելութիւն չը գտան «Մուրճ»-ի մէջ: Կեղծ գիտնականները, թաքուն նպատակների հետևող գրողները, թմրած ու փտած ոյժերը ոչ մի կերպ ընդունելութիւն չը գտան «Մուրճ»-ի մէջ:

Ընդունելութիւն չը գտան նաև մարդիկ, որոնք իրանց տհաս մտքերով չը գիտես թէ ի՞նչ նպատակի են հետևում, թէ ի՞նչ է նոցա իսկական աշխարհահայեցողութիւնը: Մենք այդ կողմից չը շլացանք ոչ գիտնական տիտղոսներով և ոչ էլ ցոյց տւած աղատամտութիւնով, երբ երկու դէպքերումն էլ գիմակներ էինք տեսնում:

«Մուրճ»-ին պէտք էին յառաջդիմական գաղափարով տոգորւած, քայց և միանդաման ուղղամիտ, լոյս աշխարհում գործող աշխատակիցներ: Մենք խօսում ենք, ի հարկէ, միայն մշտականների մասին:

Միւս կողմից «Մուրճ»-ը այնքան անկախ էր, որ նրան աշխատակցելը ոչ մի կերպ չէր կարող կախւած լինել «Մուրճ»-ից առաջ եղած խմբերից և սոցա հետ ունեցած կապերից: Ինչ խմբերին էլ պատկանած լինէին «Մուրճ»-ի պատահական աշխատակիցները,— ոչ ոք չը պէտք է իւր առանձին քաղաքականութիւնը ներս մտցնէր «Մուրճ»-ի մէջ:

«Մուրճ»-ը ամեն բանի մէջ հետեւեց քննադատական-հետազոտական մեթոդին, ձգտելով այդ ուղղութիւնը հաստատել մեր գրականութեան մէջ՝ հասարակական խնդիրների նկատմամբ:

Այս առաջին տարում, երբ հարկաւոր էր դեռ շատ դժւարութիւնների դէմն առնել, երբ հարկաւոր էր դեռ ամսագրի բաժինները հաստատել և նրանց ուղղութիւն տալ, այս առաջին տարում, երբ կատարւում էր գրողների ծանօթութեան պրօցեսը «Մուրճ»-ի հետ, այս առաջին տարում, ասում ենք, մենք աշխատեցինք ոչ այնքան խնդիրներ լուծել, որքան խնդիրներ դնել, ցոյց տալու համար թէ ի՞նչ բնաւորութեան խնդիրներով և ի՞նչ ընդարձակութեամբ «Մուրճ»-ը նրանցով պէտք է զբաղւի: Այդ ձգտումի ծնունդներն են՝ «Հողալին խնդիրը Անդրկովկասում» և «Պանդխտութեան խնդիրը յօդւածների առաջին հատւածները, որոնք կրում են մեր ստորագրութիւնը, «Հողալին վարկը Անդրկովկասում» երկու այլ յօդւածները պ. Գրիգոր Վարդանեանցի և Ունիքը Երևանեան նահանգում» — պ. Գ. Մնացականեանցի — երկու յօդւածը: Այդ յօդւածներով մենք կարծում ենք, թէ բաւականաչափ ցոյց տրւեց, որ «Մուրճ»-ը բոլորովին լրջօրէն ձեռք է մեկնում դէպի մեր ժողովրդական ամենածանր խնդիրները և որ նա ուզում է ընդարձակ ծաւալով այդ և դոցա նման խնդիրները ուսանել և լուծելուն նպաստել: Այդ կերպով նա մէկը միւսի յետեւից պէտք է իւր ձեռքը առնէ ժողովրդական կարեւորագոյն խնդիրները: Եւ մենք առանց օգնականների չենք ֆնալ անշուշտ. կը գտնւին նաև ուրիշ աշխատակիցներ, որոնք, ընտելացած «Մուրճ»-ի աւելի մեծ պահանջներին, կ'աշխատեն իրանց յօդւածներով աջակցել մեզ այդ խնդիրների նկատմամբ: Այդ աջակցութեան վերայ մենք

այժմ շատ աւելի մեծ հիմք ունինք վստահ լինելու, քան տարւայ սկզբին, երբ դեռ ոչ ոքին յայտնի չէր ապագայ «Մուրճ»-ի բռնելիք դիրքը դէպի այդ խնդիրները, երբ դեռ ևս որոշ չէին աշխատակիցները և «Մուրճ»-ի մէջ լինելիք ոգեկան յարաբերութիւնները: Այժմ արդէն, մի տարի զործելուց յետոյ, այդ յարաբերութիւնները շատ աւելի որոշ են: «Մուրճ»-ը, զոհունակութեամբ կարող ենք ասել, այժմ ունի մի խումբ համակրողներ, որոնք յարել են «Մուրճ»-ին զխտակցաբար և մի տարի սպասողական դիրք բռնելուց յետոյ: Եթէ 1889 թւականին «Մուրճ»-ը ունէր բազմաթիւ ազատ, բաց մի-միայն ազատ աշխատակիցներ, այժմ, տարւայ վերջին, նա ունի մշտական աշխատակիցներ, որոնք կը մասնակցեն արդէն ուղղութիւն կրող յօդաւածներով և ոչ միայն ազատ ու պատահական գրածքներով:

Խօսքը մեզ շատ հեռու կը տանէր, եթէ «Մուրճ»-ի ամեն մի բաժնի վերայ առանձին-առանձին կանգ առնէինք: Ներկայ 1889 թւականին «Մուրճ»-ի մշտական բաժիններն էին՝ Առաջնորդողներ հասարակական—ժողովրդական խնդիրների մասին, Բանաստեղծութիւններ, Վէպեր ու Պատկերներ, Քննադատութիւններ, Գրախօսութիւն, Ներքին Տեսութիւն, Թղթակցութիւններ Արտասահմանից և Քաղաքական Տեսութիւն:

Մեր այս տարւայ ամենաառաջին ջանքն էր՝ հաստատել «Մուրճ»-ի բաժինները և նրանց տալ որոշ կնիք: Եւ ահա՛ թէ դժւարութիւնը ինչի մէջն էր:

Նախկին ամսագիրները և այժմեան լրագրութիւնը գրողների սերունդ չէր ստեղծել մի ամսագրի համար, որ վերջինս ուղղակի կարողանար օգուել այդ ոյժերից: Լոկ գրականութիւնով զբաղւած մարդիկ չը կան մեզանում: «Մուրճ»-ի մէջ եղած բաժինների մեծ մասը, այնպէս, ինչպէս նոքա տանում են, չը կային հայկական ամսագիրների մէջ և չը կան մեր արդի լրագրութեան մէջ. այդ իսկ պատճառով դեռ պէտք էր բաժինների տիպեր ստեղծել:

Այդ բաժինները արդէն հաստատւած են և մեզ կը մնայ, գալ 1890 թւականին նրանց շարունակել և, եթէ միայն հասարակու-

թեան օգնութիւնը մեզ չը մերժեց, նրանց ընդարձակել և նորերը բացել:

«Մուրճ»-ի այդ առանձին բաժինների արժանաւորութիւնների մասին ընդարձակ խօսելը աւելորդ ենք համարում: Գծադրենք սակայն նոցա առանձնապատկութիւնները ամփոփ կերպով:

Հասարակական, ժողովրդական խնդիրներից զատ, «Մուրճ»-ը աշխատեց մեր ընթացիկ կեանքի և գրականութեան պահանջներին բաւարարութիւն տալ: Խմբագրութեան մէջ ստացւած գրեթէ բոլոր գրքերի մասին «Մուրճ»-ը տւեց քննադատական նկատողութիւններ, բայց այն ձևով, որ թէ հասարակութիւնը և թէ հեղինակները կարող էին դոցանից շահւել: Առանց աչառութեան, բայց և առանց թշնամանքի, կարճ խօսքերով շատ ասել — ահա՛ «Մուրճ»-ի այդ բաժնի յատկութիւնը, բաժնի, որը արհամարհւած էր հայկական մամուլի մէջ մինչև «Մուրճ»-ի լոյս տեսնելը:

Ներքին Տեսութեան մէջ «Մուրճ»-ը աշխատեց հաշիւ տալ այն բոլոր երևոյթներից, ինչ մեր աղքատիկ ներքին կեանքը կարող էր ներկայացնել: Այդ բաժնում մենք ուզեցինք խստօրէն մնալ եղելութիւնների շրջանում, խօսել միայն եղած բաններից, բայց կցելով մեր խորհրդածութիւնները նոցա մասին և նոցա առիթով: Տարւայ ընթացքում մեզ պատահեց լսել նկատողութիւններ այդ բաժնի մասին: Խոստովանում ենք, որ այդ բաժինը համեմատապէս հարուստ չէր: Այդ նկատողութիւնները, սակայն, մենք միայն մասամբ արդարացի գտանք, որովհետև մեր ներքին կեանքի կարևոր և բնորոշ եղելութիւններից չի կարելի ցոյց տալ և ոչ մէկը, որի մասին մի գնահատութիւն եղած չը լինէր այդ բաժնում:

Քաղաքական Տեսութիւնը «Մուրճ»-ի մէջ, որպէս այդ նկատւած է արդէն հասարակութեան մէջ, բոլորովին այլ տեսակ է խմբագրւում, քան ինչին սովոր էին ցայժմ. հայ ընթերցողները: Միութեան վերածել քաղաքական մասնաւոր դէպքերը՝ մոցնելով նրանց ընդհանուր քաղաքական տեսակէտների տակ — ահա՛ «Մուրճ»-ի Քաղաքական Տեսութեան բնաւորութիւնը: Իբրև այդպիսին, այդ բաժինը նորութիւն է մեր գրականութեան մէջ:

Ընդարձակ քննադատութիւններ այս տարի «Մուրճ»-ը ունեցաւ երեք հատ — պ. Քարամեանի՝ Պաշտօնացի երկերի մասին, պ. Քալան-

Թարի՝ պ. Յովհաննիսեանի բանաստեղծութիւնների մասին և վերջապէս պ. Աբեղեանի՝ Ազգային Վէպի մասին, որի շարունակութիւնը վերապահւած է գալ 1890 թւականի համար: Մանաւանդ ուշադրութեան արժանի է վերջինս, որը քննադատութեան ուժով ուղղւած է վերակենդանացնել մեր հին բանաստեղծական աշխարհը, — մի գործ, որը անշուշտ գրաւելու է ընդհանուրի ուշադրութիւնը և մնալու է ներկայ թւականի հայոց քննադատական գրականութեան կարեւորագոյն վաստակներից մէկը:

Մենք ծառայեցնում ենք այդ օրինակը ապացոյց տալու համար, թէ ո՛րքան անհիմն է յայտնի շրջաններում բաւականին տարածւած այս կարծիքը, իբր թէ «Մուրճ»-ը չէ գնահատում պատմական երկերը: Ոչ. «Մուրճ»-ը գնահատում է այդ, բայց ի սէր հնութեան նա չէ ուղղւած ասպարէզ լինել անտաղանդ գրած քների, որոնք ոչ մի նորութիւն և ինքնուրոյնութիւն չեն ներկայացնում: Իւր ընդդիմադրութիւնովն իսկ այդ հին կեղծ-կլասիկական ուղղութեան, — «Մուրճ»-ը ասպարէզ է բացում նորագոյն մտքով գրական քննադատութեան համար, որի հետեւանքները ժամանակը ինքը զգալ կը տայ անշուշտ:

«Մուրճը որպէս հասարակական օրգան» ընդհանուր վերնագրով մենք հրատարակեցինք երկու յօււածներ, որոնցով առաջին անգամ քննադատական գնահատութիւն էր տրւում հայ պարբերական հրատարակութիւնների, սկսած 50-ական թւականներից և որոշւում նոցանից յառաջացած խմբերի և կուսակցութիւնների կազմը, ուղղութիւնը և կատարած դերը: Այդ ուսումնասիրութիւնը կ'ունենայ իւր լրացուցիչ մասը և կը կազմի մի կտոր հայոց նորագոյն մտաւոր շարժման պատմութեան:

Վաղուց է, շատ վաղուց, որ հայկական բանաստեղծութիւնը չէ շարժել հայի հոգու թելերը բանաստեղծութեան յատուկ դիւթականութիւնով: Որպէս զի միմիայն պարբերական հրատարակութիւններից խօսենք, «Հիւսիսափայլ»-ից դէսը ոչ մի հայկական ամսագիր չէր բերել իւր հետ մի բանաստեղծական ուղղութիւն: «Հիւսիսափայլ»-ի օրերից սկսած, երբ Շահազիզը սկսեց պատրաստել գրելու իւր «Լեւոնի Վիշաթ», հայ բանաստեղծութեան երկնակամարում առհասարակ չ'երևաց մի աստղ: Զուտ բանաստեղծութիւնը եօթը կնիքով փակած գիրք մնաց

Հայութեան համար: «Կռռնի»-ը բանաստեղծութիւն չը բերեց իւր հետ, թէև տպեց ոտանաւորներ. «Փորձ»-ի մէջ ոտանաւորը մեծ տեղ բռնեց, բայց հայկական բանաստեղծութեան համար մի նոր լուսամուտ չը բացեց: Ռաֆ. Պատկանեանը նոր չէր ստեղծուում, այլ նորա բարձր տաղանդը գտաւ միայն մի նոր գործադրութիւն: «Աղբիւր»-ը, ահա քանի տարի է, շարունակ տպոււմ է ոտանաւորներ ոտանաւորների վերայ և ոչ միայն մանկականներ, այլ և ոչ-մանկականներ, — և այդքան տարւայ ընթացքում մի հատիկ նոր անուն չը պարգևեց հայ լիրիկային, չը դրդեց ընթերցողների մէջ հետաքրքրութիւն դէպի բանաստեղծութիւնը: Յ. Յովհաննիսեանը կապ չ'ունեցաւ ոչ մէկի հետ և դեռ նա շատ նոր է:

Հեռու մեզնից՝ մի հաշւետութեան ժամանակ քննադատութեան մէջ մոռնել «Մուրճ»-ում դրող բանաստեղծների տաղանդների մասին. եթէ «Մուրճ»-ը խօսէ իւր աշխատակից բանաստեղծների մասին, — նա այդ կ'անէ, քննադատութեան բաժնում: Բայց այստեղ է տեղը, ուր մենք կարող ենք որոշել մեր բռնած դիրքը դէպի ոտանաւոր բանաստեղծութիւնները, որոնք հարկւրներով և հազարներով տեղացել են «Մուրճ»-ի խմբագրութեան մէջ:

Որպէս առհասարակ, նաև բանաստեղծութեան բաժնի համար մենք չենք ընկել անունների յետևից: Բանաստեղծութեան բաժնում «Մուրճ»-ի մէջ երևացել են բոլորովին նոր գրողներ, գրողներ, որոնց անունները հասարակութեան այժմ չայտնի են իրանց աշխատակցութիւնով «Մուրճ»-ին:

«Հիւսիսափայլ»-ից դէս՝ «Մուրճ»-ը առաջին ամսագիրն է, որ զարկ է տալիս հայկական բանաստեղծութեան, ոչ որովհետև բոլորը, ինչ տպում է «Մուրճ»-ը, հաւասարապէս բարձր արժէք ունին, այլ որովհետև նա ունեցաւ ուղղութիւն և, կեղծ-կլասիկականը դուրս վանելով, նա ջանք դրեց նորերի մէջ գնահատել նոցա, որոնք ապագայ են խոստանում: Առ այժմ մեծապէս գնահատում է «Մուրճ»-ը իւր այս տարւայ բանաստեղծ աշխատակիցներից՝ Լևոն Մանուէլեանցին, Արծիւեանին, Զաւար Բալուղեանին, Արշալոյս Մխիթարեանին:

Վիպական բաժինը «Մուրճ»-ի մէջ այս առաջին տարին, անկասկած, աչքի ընկնող էր. այս մի տարւայ ընթացքում «Մուրճ»-ը հրա-

տարակեց երկու մանրավէպ Փիրումեանցի և Գառնեցու, մի շարք պատկերներ գործիչների կեանքից Ալէքսանդր Նամայեանցի, և երեք բոմաններ՝ «Յեցեր», «ԽԼ-Կարապետ» և «Կորածներ», — բոլորը հայկական կեանքից. մէկը՝ Պ. Պառչեանցի, միւսը՝ նոր առպարէզ եկող Սարգիս Ատրպետեանի և երրորդը՝ պ. Լէօնի։ Մէկի բարձր հասարակական նշանակութիւնը, միւսի նորութիւնը, երրորդի ուղղութիւնը մի-մի թարմացուցիչ երևույթներ էին։ Նոքա դրդեցին հասարակաց կարծիքը, աննկատ չ'անցան։ Եւ այժմ՝ արդէն սկսում է չորրորդ վէպը, որի շարունակութիւնը վերապահւած է գալ 1890 թւականին, որպէս նաև նորա քննադատութիւնը։ Դա է «Բղդէ» — Պ. Պառչեանցի։

Մանկավարժական բաժինը բաւականի տեղ բռնեց. «Նոգեբանական-մանկավարժական խորհրդածութիւններ» և «Ուսումնարանական գիտելիքներ» պ. Յովհաննէս Տէր-Միրաքեանցի, «Տեմպերամենտ» և «Դպրոցական Զբօսանք» պ. Յովհ. Բարխուդարեանցի — ոչ միայն «Մուրճ»-ի այդ բաժինը հարստացրին, այլ և հայ գրականութեան այդ ճիւղի գլխաւոր գրածներինցն էին ներկայ թւականում։

Ժողովրդական անմիջական կարիքներին օգնութեան հասնելու նպատակով տպւեցին պ. բժշկապետ Տէր-Գրիգորեանցի (Ղլարեցու) բժշկական յօդածները, որոնք լոյս տեսան նաև առանձին բրօշխրով։ Նոյնը կը մնայ աշխատակից նաև գալ 1890 թւականին։

Մեր ներքին կեանքի ուսումնասիրութեան ծրագրի մէջ մեծ պահասորդ կը լինէր, եթէ Տաճկա-Հայաստանի կեանքը իւր բաժինը չ'ունենար «Մուրճ»-ում։ Արդ, մենք սկզբից իսկ մտածել ենք, որ այդ խնդրի մէջ մեր առարկան պէտք է լինի բուն երկիրը իւր ժողովրդով և ոչ պօլսական անհեթեթութիւնների լիակատար արձանագրութիւնները, որոնցով տասնեակ տարիներով կերակրում են հայ ընթերցողներին։ Այս դէպքում ևս «Մուրճ»-ը ուղղակի դիմեց դէպի խնդիրը ինքը, ուզելով բռնել արմատից և ոչ ծայրերից։ Ո՞վ կարող է հերքել, թէ, տասնեակ տարիներով Տաճկա-Հայաստանի հետ զբաղւելով հանդերձ, այդ խնդը երկիրը մնացել էր մեզ համար մի terra incognita, մի անյայտ երկիր նոյն իսկ ամենաընթերցող հասարակութեան համար։ Պարոն Աւոն Սարգսեանցի գրածքները «Մուրճ»-ում մի-մի յայտնութիւններ էին այդ խաւարով պատած, բայց, մեզ ամենքին այնքան սրտի մօտ, հայերի երկրի մասին։

Այժմ երբ այդ ուսումնասիրութիւնը շուտով յանգելու է իւր վախճանին, «Մուրճ»-ը կ'աշխատի, հնարաւոր եղածին չափ, ամեն ամիս հաշիւ տալ Տաճկա-Հայաստանի ընթացիկ կեանքի դէպքերից: Եւ որ նոյն մեր աշխատակիցը կը մնայ մերձաւորագոյն անձը այդ բաժնի համար,—կարօտ չէ յայտարարութեան:

Այն, ինչ նոյնքան հարկաւոր մի մասն է «Մուրճ»-ի ծրագրի, մեր ոգեկան և կրթական շարժումներն են: Կան բազմաթիւ երևոյթներ, որոնք չեն հասունացել մինչ այն աստիճան, որ նոքա կազմեն մի-մի այլուդ խնդիրներ, որոնք սպասում լինէին մի շուտափոյթ պատասխանի, բայց երևոյթներ են, որոնք պահանջում են քննութիւններ, և պահանջում են դիտողներ: Ինչ է մեր ինտելիգենցիան, ինչ պէտք է լինի զործիշների բռնելիք ուղին, որոնք են մեր կեանքի կրթական Ֆակտորները, ինչ զանազանութիւն կայ զիւղի և քաղաքի մէջ և այլ դոցա նման խնդիրներ, որոնք թոյլ են տալիս շատ թէ քիչ ազատ մտածողութիւններ,—ահա խնդիրների մի լայն շրջան, որը սոյն 1889 թւականին տեղէնուեցաւ «Մուրճ»-ում և որը զալ 1890 թւականից կը լինի մշտական բաժիններից մէկը: Այդ կարգի յօդաճներ խոստանում է տալ պ. Ալէքսանդր Քալանթար, մինչդեռ գաւառական կեանքի քննական վերլուծութիւնը կը տայ պ. Լէօն, «Կորած»-ների հեղինակը:

Սրանով մենք վերջ ենք տալիս «Մուրճ»-ի սոյն տարւայ հաշւետուութեան: Այժմ մենք դիմում ենք հասարակութեան և ասում ենք նրան.

Մենք կազմել ենք զալ 1890 թւականի համար գործունէութեան մի ամբողջ ծրագիր, որի ուրւագիծը կազմում է 1889 թւականի «Մուրճ»-ը: Սոյն 1889 թւականին «Մուրճ»-ը սկսեց կազմակերպւել, հաստատուել. նա սկսեց, երբ ոչ մի նախապատրաստութիւն չէր տեսնւած, և, չը նայած դորան, նա զուրկ չ'եղաւ հարուստ բովանդակութիւնից: Գալ 1890 թւականին «Մուրճ»-ը կը լինի, ինչ էր սոյն 1889 թւականին, դորա վերայ աւելցրած այն, ինչ կարող է իւր հետ բերել փորձը, աշխատակիցների մի աւելի համերաշխ խումբ և նիւթերի նախապատրաստութիւնը:

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ